

ԲՈՒՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԼԵՀԱՍՏԱՆԻ

ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀՌՈՎԱՄԱՅ.

ԺԼՄԱՆԱԿԵԿԻՑ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԻ.

Ի Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ 1884

Այս վերնագրով գիրքը գոհութեամբ մեծաւ ստացանք Պ. Կա-
րապետ Եղեանից: Գրքի մասին հարկ ենք համարում տալ տեղե-
կութիւն մեր ընթերցողներին: Ի բաց թողնելով «Մատենագրու-
թիւնը պատմութեան Հայոց Լեհաստանի» ուր յիշուած են աղ-
բիւրները, որոնցից օգուտ է քաղել Պ. հրատարակչը, «Յանկ կա-
րեոր վրիպակաց» եւ «Յանկ յատուկ անուանց» — գիրքը բաժան-
ուած է հետեւեալ մասների. — Ա. Յառաջարան երես է. — ԽԲ. Բ.
Պատմութիւն Առաքել վարդապետի ԳԼ. ԻԸ. երես ԽԵ. — ԿԶ. Գ.
Յիշատակարան Հ. Պիղու եր. 1—135, և Դ. Յիշատակարան երկ-
րորդ եր. 139—270:

Գիրքը նուիրուած է Հանգուցեալ Տէր Գէորգ Դ. Վեհափառ
Կաթողիկոսի յիշատակին, և գրուած ու թարգմանուած է
յստակ գրաբարով:

Պ. Եղեանի այս գնահատելի աշխատութիւնը հրատարակուելուց
յետոյ հայ մամուլը անտարբեր չը մնաց, «Արձագանք» շաբաթեր-
թը քաղուածօրէն բառացի թարգմանութեամբ հրատարակեց յա-
ռաջարանը աշխարհաբար ոճով, «Մեղու» լրագիրը ևս սկսել է 56
համարից՝ գրքի մատենախօսութիւնը, որի հենց առաջին մասնում
պ. մատենախօսը Մեկքիսեդէկ Կաթողիկոսի գործերը Փիլիպպոս
Կաթողիկոսի վերայ է դնում, և այսպէս Մեկքիսեդէկի տեղ՝ յի-
շումէ Փիլիպպոսի անունը՝ որ մեր Կաթողիկոսների շարքում ամե-
նաարժանաւոր, առաքինի եւ ժողովրդի համար անձնանուէր
հովուապետներից մէկն է:

Պ. Եղեանը յառաջարանի սկզբում համառօտ կերպով յիշելով
իւր հրատարակութեան շարժառիթ հանգամանքը, անցնում է
բուն խնդրին՝ ամենայն ճարտարութեամբ ամփոփելով Առաքել
վարդապետի, Հ. Պիղուի և Երկրորդ յիշատակարանի միտքը, այն-
պէս որ, կարգալով յառաջարանը կարեւոր տեղեկութիւնները
լուստբանուած են լինում:

Ըստ Պ. Եղեանի՝ պատերազմական և աշխարհակալական ոգի՝ Հայերի մէջ այնպէս վառ չէ եղել ինչպէս կրօնականը, իսկ Տիգրան երկրորդի Միհրդատի աջակցութեամբ մրցումը ընդդէմ՝ Հռոմէայեցւոյ՝ եղել է միմիայն նոցա միաբանակցութեան և ցանկութեան հետեւանք. այնպէս որ Պոմպէոսի յաղթութիւնից և Անտոնինոսի արշաւանքներից յետոյ, Հայոց պետութիւնը մտաւ Հռոմէայեցւոյ յետոյ Պարսից և ապա Յունաց կայսերութեան իշխանութեան տակ և դարձաւ յիշեալ տէրութեանց մրցութեանց ասպարէզ։ Պ. Եղեանը այսպիսի տխուր գուշով չէ ներկայացնում կրօնական ոգին՝ մանաւանդ քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ։

Ըստ Պ. Եղեանի, հայերը ձգտումն չեն ունեցել միաւորեալ և անկախ տէրութիւն կազմելու՝ կամ եղածը պահպանելու, իսկ քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ, երբոր ազգն ու եկեղեցին միաւորուեցին, ազգը կամ ազգային գաղափարը մարմնացաւ եկեղեցու մէջ։ Եւ հետեւեցնում է. « Սորին յաղագս յար վառ տեսնեմք ի նոսա զիլձ հոգեւորի անկախութեան. և այս ձգտում յաղատութիւն կրօնի և եկեղեցւոյ իւրեանց՝ կարեւորագոյն պատմութեան Հայոց և որոշիչ յատկանիշ նորան » Յառաջ, երբ. — Ը։

Ըստ ամենայնի ընդունելով այն հանգամանքը թէ, քաղաքական իշխանութիւնից զուրկ ազգի համար կրօնը ազգային գոյութեան միակ հաստարանն ու միաւորիչ կապն է, պէտք է խոստովանել որ եթէ հայերը չեն ունեցել հզօր պետութիւն՝ այդ ոչ այնքան նոցա մէջ պատերազմական առաքինութեան չրգոյութիւնիցն է, որքան երկրի աշխարհագրական դիրքից. վասն զի, թող որ երկիրը բնական բաժանմամբ զանազան մասերի և նախարարութեանց էր տրոհուած, և բարձրաբերձ լեռների ծործորները մեծ արգելք էին դնում ներքին միաւորութեան ու կապակցութեան, Հայաստանը գտնուելով Պարսկաստանի, Յունաստանի և ի հնումն ասորական և բաբելական տէրութեանց սահմանակից, և շրջապատուած լինելով հզօր զրացիներով, մի հատիկ ճանապարհն էր այդ ազգաց միմեանց հետ ունեցած պատերազմական արշաւանքի։ Այս բաղդին ենթակայ լինելով պարտաւոր էր յարգել մէկի կամ միւսի դաշնակցութիւնը, հետեւաբար և երկրորդական տեղ բռնել այդ մրցմանց մէջ։ Ա. Վրթանէս հայրապետի բուռն քանքը Տրդատի մահից յետոյ Խոսրովին և ապա Տիրանին թագաւորեցնելու և

Մեծն Ներսէսի աշխատութիւնն և տառապանքը Պապին թագաւորեցնելու, և Սահակ պարթևի հօր ընդդիմութիւնը նախարարների գէմ՝ Արտաշրին չը մատնել Պարսից, արդէն քաջ իսկ ապացոյց են որ, քրիստոնէութիւնը ոչ թէ արգելք էր լինում կաղմիոյ պետութիւն միաւորեալ և անկախ, և կամ պահպանելոյ զոր միանգամ ընկալան, այլ ամեն ջանք գործ էր գնում որպէս զի հնար լինի կազմեալ պետութիւնը միաւորեալ և անկախ պահպանել: Եթէ քրիստոնէութիւնը ուրիշ ազգաց վերաբերութեամբ կենսատու և փրկարար է, և միակ օճան բարգաւաճման ղորութեան, Հայոց համար ուրիշ կերպ ներգործութիւն ունենալը տարօրինակ բան կարող է համարուել: Քաղաածօրէն հետեւեալ համառօտ ամփոփելով ի գիտութիւն մեր ընթերցողների Պ. Եղեանի յառաջաբանի շարունակութիւն:

Գ. Գարում Հայաստանի Պարսից և Յունաց մէջ բաժանուիլը, Պարսիկների ձգտումը Հայերին դրադաշտական կրօնին դարձնելով Յոյներից հեռացնել ու իրանց հետ միացնելը և Արարացւոց օրով Հայաստանի անկերպարան վիճակը ներկայացնելով Պ. Եղեան անցնում է Բագրատունեաց հարստութեան սկզբնաւորութեանը՝ ըստ ամենայնի արդարապէս նկատելով որ տիրող պետութիւնները միշտ ձգտել են հայերին կրօնապէս միացնել իրանց հետ. վասն զի լաւ համոզուած էին որ մի հպատակ ազգի առանձնութեան և ինքնուրոյնութեան միակ հաստարանը կրօնն է, այդ հաստարանը կործանելուց յետոյ՝ հպատակ ազգը կորցնում է ինքնուրոյն լինելու յատկութիւնն ու տալաւէնը և առ խորիմալ ընկնում է իրանից հօրագունի ճանկը, և ձուլուելով նորա հետ՝ կորցնում իւր գոյութիւնը, ինչպէս պատահեց ի միջի այլոց Ահհաստանի Հայերին, որոնց ոսոխ Ատոկն կրօնաւորները նախ հարթեցին ճանապարհը միջամուխ լինելու Հայոց եկեղեցական գործերին, յետոյ պատուաւորեցին կաթողիկոսութիւնը հայկական եկեղեցու վերայ, և որովհետեւ հայկական եկեղեցին իւր ընդհանուր վերայ չէր՝ բոլորովին տեղի տուեց կաթողիկոսութեան, և այսպէս կաթողիկոսացած ազգը կորցնելով եկեղեցին՝ կորցրեց լեզուն ու ազգը և իւրացնելով լեհացւոց լեզուն ու ազգային սովորութիւնները՝ խառնուեց նոցա հետ և կորաւ:

Պ. Եղեանը յառաջաբանի Բ. գլխում, յիշելով Անի քաղաքի անկումը և Սելջուքեանց արշաւանքը, իբրեւ դոցա բնական հե-

տեւանք՝ նկարագրումէ Անեցոյոց գաղթելը: Այս գաղթականութեան
օժանդակումէին Յոյները՝ տալով նախարարներին Հայաստանից
գուրս բերգեր, քաղաքներ և գուռառներ: այսպիսով Հայերը բազ-
մացան Փոքր - Ասիայում և Կիլիկիայում: և այս անումէին Յոյ-
ները՝ կարծելով թէ Հայերի գաղթելուն նպաստելով Հայաստանում
կը նուազեցնեն և կը տկարացնեն Հայ տարրը և առանց դժուա-
րութեան կը տիրապետեն Հայաստանին: Բայց իրանց հաշիւով
շատ սխալուեցին, վասն զի ցրուած Հայերի տեղ մահմետական-
ները բռնեցին: և այն օգնութիւնը, որ կարող էին սպասել Յոյ-
ները Հայերից՝ իբրեւ քրիստոնեայ հաւատակիցներից՝ կորցրին,
իրանց դէմ՝ յարուցանելով մահմետականների թշնամական յա-
րաբերութիւնը: Եւ Հայաստանը որպէս տէրութիւն իբրեւ պատ-
ուար կարող էր ծառայել Յունաց կայսերութեանը ընդդէմ արա-
բացոց, Յոյները իրանք իրանց ձեռքով այդ պատուարը կործա-
նեցին և պարտաւորուեցին անմիջական մրցման մէջ մտնել մահ-
մետականների հետ, վերջ է վերջոյ զոհ տալով նա և իրանց
պետութիւնն ու մայրաքաղաքը: Դաղթած Հայերը միանգամ ի-
րանց հայրենի երկիրը լքանելուց յետոյ, այնուհետեւ ցրվում էին
այնտեղ, ուր կարծումէին թէ կարող են հանգիստ վայելել: Այս-
պէս Հայոց գաղթականութիւնը հասաւ մինչև Ափսերիան, և
իբրեւ վաճառական ժողովուրդ սկսեց Աւ և Աղախու ծովերին
մօտ Զենովացոյ վաճառատեղիների հետ յարաբերութիւն ու-
նենալ, որով տարածուեցին Խրիմ, Ռուսաստան, Մոլդաւիա,
Վալաքիա, Պօդոլիա, Լեհաստան, Գալիցիա, Տրանսիլվանիա, Մա-
լաւստան և Իտալիա: և ոչ այսչափ միայն, այլ և Հայաստան աշ-
խարհին հասած վտանգներից համեմատ՝ շատանումէր գաղթակա-
նութիւնը: Խրիմում ինչպէս ժ.Գ. և ժ.Գ. դարու պատմիչները
գրումեն, Հայերը այնքան շատացած էին՝ որ երկիրը Մովսէսին Հա-
յաստան էր կոչվում, և Կաֆայում (Թէոդոսիայում) Հայերի թիւը
30,000 էր համարվում, իսկ Հայոց եպիսկոպոսը Զինովացոյ հիւ-
պատոսների հետ դաշինք էր կառու: Հայերի այսքան բազմութիւնը
ի հարկէ չէր կարող իւր վերայ չը գրաւել Հռովմայ Հայրապետների
ուշագրութիւնը և ահա 1318 թ. Յովհաննէս Ի. Պապը Կաֆա-
յում եպիսկոպոսական աթոռ է հիմնում և առաջին եպիսկոպոս
Հերոնիմոս, որ Ֆրանչիսկեան կարգիցն էր, հետամուտ է լինում որ
Հայերը հնազանդեն Պապին: Հռովմայ այս հետամտութեանը ար-

գելք է լինում Զինովացւոց իշխանութիւնը, իւր հիւպատոսներից մէկի բերանով ասելով. « Դիտէ՛ք որ աշխարհիս բնակիչների մեծ մասը Հայեր են, որոնք շատերից հաւատարիմ և պատուական վաճառական մարդիկ են, որոնցից մեծ շահ ունի պետութիւնը » : Կաֆայի Հայերը ունէին սեպհական եպիսկոպոս, 24 եկեղեցի և մի վանք, որոնց մէջ պահպուսմէին Անիից տարուած եկեղեցական սպասներ և սրբոց պատկերներ: Երբոր Օսմանցիք նուաճեցին Խրիմը, և սկսեցին նեղել Հայերին, նոքա սկսեցին գաղթել Լեհաստան, ուր նախկին Հայ գաղթականները մեծ մեծ արտօնութիւններ էին լայնելում: Հայերը 1062 թ. հրաւիրանօք Ռուսաց Իզեասլաւ Խարոսլաւովից մեծ իշխանի, գաղթեցին Ռուսաստան և բնակուեցին Կիևի և Կամենեց քաղաքներում. Հայոց յաջորդութեան համբաւը լսելով Պալիցկոյ Գանիէլ Ռումանովից իշխանը և նորա սրդին Աւոն՝ հրաւիրեցին նոցա բնակուել Իւլով քաղաքում: Ակերում Հայերը մեծ նեղութիւններ էին կրում՝ յաճախակի պատերազմներից, բայց երբոր Լեհաց թագաւոր Մեծն Կազիմիր Լեհաստանի հետ միացրեց Իւլովի գաւառը, ոչ միայն Հայերին խաղաղացրեց զանազան առանձնաշնորհութիւններով, այլ և սկսեց հրապուրել նոցա գէպ ի իւր պետութիւնը, և բնակեցրեց Իւլովում. թոյլ տուեց նոցա իրանց օրէնքներով վճռել իրանց գատերը, և կրօնի ազատութիւն շնորհեց: Այս արտօնութիւնները շուրջին Հայերին, որոնք սկսեցին գունդագունդ գէպի Լեհաստան աճապարել և այս մանաւանդ Ժե-րզ դարում, երբ Հայաստանը արեւիոճվումէր բարբարոսների արշաւանքներից և սրածութիւններից: 1402 թ. Վլադիսլաւ Ա. թոյլ տուեց Հայերին իւր բոլոր պետութեան մէջ վաճառականութիւն անել, իսկ 1641 թ. Վլադիսլաւ Գը մարտերից և տուրքերից ազատ կացրեց: Ակերում պարտաւորեցնումէին Հայերին գերմանացի ժողովրդոց պէս, նոցա ստացած սահմանադրութեան համեմատ, նոցա Մագտերուրգ կոչուած օրէնքով վարուիլ և դատուիլ քաղաքի վոյթի ու դատաւարների ձեռքով, բայց Հայերը գրեթէ երկու դար մտքառելով Իւլովի գերմանացիների հետ, ուր ուրեմն Կազիմիր Գ-ից 1469 թ. իրաւունք ստացան առանձին վոյթ և դատաւորներ ունենալ, իսկ յետոյ 1476, 1510 և 1518 թ. հրովարտակներով Հայերը պարտաւորուեցին անշուժ գոյքերի, ընտաւարութեան, սպանութեան, վէրքի և գողութեան համար՝ դատուել քաղաքի վոյթի և դատաւորների ձեռքով: Այս

որոշումից դժգոհ՝ 1518 թ. Հայերը բողոքեցին Սիգիզմունդ Ա. թագաւորին, որի հրամանով թարգմանեցին Լատիներէն և Ռուսիէնաց լիզուով իրանց վաղեմնի օրէնքները և 1519 թուին ներկայացրին ի քննութիւն որ և աննշան փոփոխութեամբ հաստատեց Սիգիզմունդ, մինչև որ 1549 թ. Սիգիզմունդ Աւգոստոս թագաւորը Հայերին բոլորովին ազատ կացրեց քաղաքի վոյթից և դատաւորներից՝ գրելով. « իրանց ամեն դատաստաններում և առանձնական գործերում Հայոց դատաւորները վճիռ տան. ոչ որ չարգելի նոցա (Հայերին) դիմել դէպ ի նոցա*) (դատաւորները) »: Նոյն առանձնաշնորհութիւնն էին վայելում նաև Ելվովից գուրսեղած Լեհաստանի Հայ գաղթականները: Լեհաստանի Հայոց առաջին Հոգևոր վիճակը հաստատուեց Ելվովում 1364 թ. Ս. Էջմիածնի Մայր Աթոռի**) հրամանով և Մեսրոպ Կաթողիկոսի ձեռքով: առաջին եպիսկոպոսի անունն էր Գրիգոր:

Ժէ. դարում երբ Հայաստանը Շահ - Արաքի գերեվարութեան երեսից աւերակ էր դարձել, իսկ Ժողովուրդը թշուառացած յոգիս տպաստան իրանց անձը ապրեցնելու համար գունդագունդ գաղթումէին, Լեհաստանը իւր պատապարած Հայերի բարեբաստիկ վիճակով չէր կարող հրապուրելի չը լինիլ. ուստի ամենայն նեղեալ այնտեղ սփոփանք գտնելու յոյսն էր տաճում: Այսպէս վարուեց նա և Մելքիսեդէկ Կաթողիկոսը, որ պարտքերի համար քանիցս մահու էր դատապարտուած և հաղիւ ազատուած: Մելքիսեդէկ իրան և Աթոռը տառապանքից ազատելու համար գնաց Լեհաստան, ուր վէ՛մ գալթակցութեան Նիկոլ չեպիսկոպոսի ձեռնադրելու թուլութիւնն ունեցաւ: Իսկ մենք այս տեղ ընդհատենք Պ. Եղեանի յառաջաքանի շարունակութիւնը և դառնանք Առաքել վարդապետին՝ որ առանց կաթողիկ կղերի ջանադրութեանցը

(*) Յառաջ. եր. ԺԸ.

(**) Հայոց պատմութիւնից յայտնի է որ 1441 թ. Կիրակոս Վիրապեցու ընտրութեամբ Հայրապետական Աթոռը Սից փոխադրուեց Էջմիածին. հետևաբար Մեսրոպ Կաթողիկոսի օրով որ Արտազու թագէի վանուց վանահայր էր և 1360 թուերին յաջորդեց Յակովբ Սեցուն՝ Հայրապետական Աթոռը դեռ չէր փոխադրուել Ս. Էջմիածին: Թուի թէ Պ. Եղեան Սսի Կաթողիկոսութիւնը Էջմիածնի Կաթողիկոսութիւն է կոչում, որովհետև այդ Աթոռը Ս. Էջմիածնից աստանդական լինելով առ ժամանակ մի դադար էր առել Սսում:

խելամուտ լինելու պարզ և որսաշարժ ոճով գրումէ Անհատանի Հայոց՝ Նիկոլի երեսից կրած տառապանքը:

Մեկքիսեղէկ նուիրակութեան համար գնաց Ելվով և սմն Նիկոլ արեղայ, միջնորդների ձեռքով շատ ոսկիներ առաջարկելով նորան՝ խնդրեց Ելվովի և շրջակայից եպիսկոպոս ձեռնադրուել. այս որ խմացան քաղաքի ժողովուրդը, քահանայք, իշխանք և ռամիկը, գիտենալով Նիկոլի որպիսութիւնը՝ յայտնեցին Վաթուգիկոսին որ ք ձեռնագրի նորան: Վաթուգիկոսը առ ոչինչ համարելով ժողովրդի անընդհատ կրկնուող խօսքը Նիկոլի անարժանութեան համար, ուր ուրեմն քաղաքից գուրս եղած Հաճկատար Ս. Աստուածածնի վանքում գաղտուկ, գիշերը ձեռնագրեց եպիսկոպոս: Ժողովուրդը իրազգած լինելով շուտով վրայ հասաւ և աղաղակումէր. «Մի օրհներդգա և մի մասնեք զմեզ և զեկեղեցիս մեր ի ձեռս անիրաւիք այգմիկ, զի գիտեմք զդա և զորպիսութիւն վարուց դորա, վասն որոյ ոչ է մեզ ընդունելի: Եւ Վաթուգիկոսն նրստեալ ի վերայ աթոռոյ՝ օրհնէր զՆիկոլ արեղայն եպիսկոպոս, և խաչիւն, որ ի ձեռին էր սաստ՝ ր ժողովրդեանն և զբանս ագեղս, զոր ոչ է պարտ յիշել՝ ասէր նոյա» (եր. խզ.):

Երբոր Մեկքիսեղէկ Ելվովից ուղեորումէր Վամենեղ, տեղւոյն ժողովուրդը աշխատումէին որ Նիկոլին էլ տանէ, Նիկոլը ըստ երեւութին՝ հաճութիւն տուեց հեռանալ և կաթուղիկոսի հետ մի քանի օր ուղեորելուց յետոյ՝ յետ դարձաւ Ելվով, ընդգէմ՝ հակառակորդաց՝ կաթուղիկոսի բռնադրանաց և նդովից թղթերը ձեռքին, որ և կարգաց ի լուր ժողովրդեան. իսկ Մեկքիսեղէկ կաթուղիկոսը Վամենեցում հիւանդացաւ և մեծի պահոց ծագկազարդի տբաթ օրը Հայոց Ռէն թուին մեռաւ և թաղուեց Վամենեցում:

Մի քանի տարուց յետոյ Նիկոլը եկաւ Վամենից և Խաչկօ սարկաւագին արեղայ ձեռնադրեց, անունը Անտիրիոս փոխելով. հէնց այդ ժամանակներն էլ Էջմիածնի նուիրակ Կեսարացի Գրիգոր վարդապետը Վամենեց եկաւ. Նիկոլ կամեցաւ առանց քառասունքը լրացնելու՝ Անտիրիոսին պատարագել տալ, այս պատճառով խնդրեց Գրիգոր վարդապետի հաճութիւնը, որի զժկամակութիւնը տեսնելով թէ և այն շաբաթը յետաձգել տուեց, բայց միւս շաբաթի կիրակէին նորընծայի քառասնից 22-րդ օրը նուիրակի գէմը եկեղեցու դուռը փակելով՝ պատարագել տուեց, և բարկանալով Գրիգոր վարդապետի գէմ՝ Վամենեցի երկու եկեղեցիների դուռն էլ փա-

կեց, որով ժողովրդին զրկեց աւագ աօների ժամերգութիւնից, Նիկոլ սորանով չբաւականացաւ, այլ Գրիգոր վարդապետին մատնելով քաղաքի վոյթին՝ որպէս թուրքաց լրտես՝ բանտը դնել տուեց, և այսպէս արգելեց նորան Եւփով գնալ, մինչև որ ժողովրդի երաշխաւորութեամբ ազատուելով հրաման ստացաւ յետ դառնալ, որ տեղից եկել էր: Գրիգոր վարդապետը Կամենեցից վերադարձաւ Բուդղան և Ռումելիոս և ճանապարհին Նիկոլի վերայ բանադրանաց և նզովից թուղթ գրելով՝ ուղարկեց Եւփով: Մովսէս կաթողիկոսն ևս Գրիգոր վարդապետի խնդրանօք բանադրեց Նիկոլին՝ որի հակառակորդները այս բանադրանաց թղթերը ի նկատի ունելով՝ սկսեցին նորա երեսօվը տալ, և մարդու տեղ չէին դնում: Ժողովրդեան խորհրդին լսելով՝ Նիկոլ 6000 զուռուշ ճանապարհի ծախք ստանալով՝ յուզի անկաւ գնալ Գրիգոր վարդապետից ներումն խնդրելու, և հասաւ մինչև Բուրսա քաղաքը, ուր Արիստակէս վարդապետի խորհրդին անսալով, հիւանդ ձեացաւ և գրով խնդրեց ու ստացաւ ներումն Գրիգոր վարդապետից՝ որ Կեստրիայումն էր: Բայց յետոյ Գրիգոր երբ լսեց թէ Նիկոլ հիւանդ չէ եղել, այլ իւր հակառակորդ Արիստակէս վարդապետի խօսքին անսալով է, որ չէ եկել անձամբ ներումն խնդրելու, բարկացաւ և նորից բանադրեց և Խաչատուր վարդապետին էլ նորա՝ նուիրակութեամբ Կեստրիայում՝ եղած ժամանակ, Գրիգոր վարդապետ յանձնարարեց, որ Եւփովում չընդունի Նիկոլին: Երբ Խաչատուր վարդապետ Եւփով հասաւ՝ որովհետև հեղաբարոյ մարդ էր, ժողովրդեան բոլոր գանգատները լսելուց յետոյ սկսեց առանձին խրատել Նիկոլին:

Նիկոլ՝ Խաչատուր վարդապետի հետ ևս սկսեց անարգութեամբ վարուել: զատաւորները փակելով եկեղեցու դռները՝ դատի կանչեցին, իսկ Նիկոլ նախապէս դատարանում՝ երկու օտարազգի պաշած լինելով՝ դուրս կանչեց դատի ժամանակ և նոցա խնդրեց վկայել ի պաշանջել հարկին՝ որ զատաւորները համարձակումն իրան, որպէս եպիսկոպոսի, դատել մի վարդապետի հետ՝ որ թուրքաց լրտես է: օտարազգի վկայքը խոստացան վկայել: Նիկոլ տեսնելով որ գործը ծանր կերպարանք է ստանում, զզջալ կեղծեց և ներումն էր խնդրում Խաչատուր վարդապետից ու ժողովրդից: Խաչատուր վարդապետը թէև շատ միջնորդեց հաշտեցնել ժողովրդին եպիսկոպոսի հետ, սակայն երբ տեսաւ թէ հաշտութեան հնար

րկայ՝ « Կալեալ իւրով ձեռամբ զփոշւատն իւր՝ թօթափելով ասաց. « Եր. Ծե) : Նիկոլ եպիսկոպոսը տեսնելով որ Իլվովացիք չեն հաշտուում, և դատաւորները չեն բաց անում եկեղեցու դռները՝ դիմեց եղուիթ-ներին և այսպիսի ձեռագիր տուեց. « Ես Նիկոլայոս եպիսկոպոս Հայոց իմովս կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ և մտի ի հնազանդութիւն փափին ամենայն հետեւելովքն իմովք, կա-տարել զամենայն հրամանս որք առ ի նմանէ » . (Եր. Ծե) :
(Կը շարտանայի) : Ե. Վ. Մ.

ՖԱԲՐԻՅԻՈՒՍ

ԴՐԱՄԱՅ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ .

(Ծ-բ-ն-ի . Ա-բ-բ-բ . Բ . Է .) :

ՊԸՏԳԵՐ ԵՐԿՐՈՐԳ .

Ազաթայի սենեակը տանիքի տակ՝ աղքատ դատաւորութեամբ, Դէպի ձախ պա-տուհան. նոյն իսկ կողմում թարեք վարագուրով, Խորքումը դուռն ելնելու դուռ. դէպի աջ՝ Տ . Վ . օլմուտի սենեակի դուռն է : Պատուհանի մօտ սեղան՝ երեք աթոռ-ներով. կամոգի վերայ դրած է յետին կողմը՝ դրան մօտ մի քանի տնօթներ, քանի մի գրքեր, եւ փոքրիկ պատկեր :

ՏԵՍԻՆ, ՀԻՆԴԵՐՈՐԻ .

ՔԷԹԻՒՆ . ՅԵՏՈՅ ԱԳԱԹԱ .

(Բեմի վերայ ոչ ոք չըկայ) :

Քէթիւն . (Դրսից ծեծումէ դուռը մի քանի անգամ) . Ազաթա . Տ . Հաերն : (Ներս է գալիս) . Նա տանը չէ : Դրասենեկից վաղուց նա գուրս է գնացել . . . Սպասեմ փոքր ինչ : (Նստումէ, խօսումէ կաս-կածանքով) . Կարելի է նա առաքինի կնոջ դեր է խաղում : (Երգումէ) .
Մայրիկ, հայրիկ մտիկ տուէք երեխային .

Նորան ամուսին կընդունիմ, ի՞նչպէս էք կամենում :

Ազաթա . (Ներս է գալիս, մտախորհ, նկատելով Քէթիւնին՝ անբա-ւականութեամբ) . Ինչո՞ւ համար է նա այստեղ :

Քէթիւն . (Հարունակումէ երգել) .

Այնպէս գեղեցիկ է, յիրաւի .

Ահա մտիկ արէք, նայեցէք

Ի՞նչպէս նա սիրուն խօսումէ :